

Տ. ԿՈՐԻԻՆ Ծ. ՎՐԴ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(1915 — 1978)

5 Սեպտեմբեր երեքշաբթի երեկոյան, Համբարձման լերան կատարին գտնուող Մաքասէտ հիւանդանոցին մէջ իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Աթոռոյս Միաբանութեան բազմաշխատ եւ երէջ անդամներէն Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Մանուէլեանը, որ ատենէ մը ի վեր կը գտնուէր հիւանդագին վիճակի մէջ:

Հայր Կորիւն, աւագանի անունով Խաչիկ, ծնած է Այնթապ՝ 1915ին: Յաճախած է նախ իր ծննդավայրի՝ եւ ապա, ընտանեօր տարագրուելով, Հալէպի ազգ. կրթարանը: 1932ին եկած է Երուսաղէմ եւ աշակերտած Ժառանգաւորաց Վարժարանին:

1935ին Վարժարանի ընթացքը աւարտելով կը ձեռնադրուի սարկաւազ. յետոյ կ'անցնի Ընծայարանի բաժինը, ուրկէ 1938ին վկայուելով արեղայ կը ձեռնադրուի Հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարքէն, նոյն տարւոյ Վարդավառին:

Այնուհետեւ, քառասուն տարիներ, լայն է եղած գործունէութեան դաշտը Հայր Կորիւնին: 1939ին կը ղրկուի Յոպպէ իբր Տեսչի օգնական, ստանձնելով նոյն ատեն դասեր տեղւոյն Ս. Գլխաղիր ազգ. վարժարանին մէջ: 1942ին վերադառնալով Ս. Աթոռ, կը դասաւանդէ Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ:

1946ին կը նշանակուի Հոգեւոր Հովիւ Ամմանի եւ շրջակայից:

1956ին Ս. Աթոռ վերադառնալով կը ստանձնէ Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի մէջ Փոխ-Տեսչի պաշտօն: 1957ին կ'ընդունի Կալուածոց եւ Ս. Հրեշտակապետաց Վանքի տեսչութիւնները եւ այդ պաշտօնները կը վարէ մինչեւ 1960:

1961ին կը հեռանայ Ս. Երկրէն: Դիչ ետք կը մեկնի Ատտիս Ապէպա, իբրեւ հովիւ Եթովպահայութեան: Այդ պաշտօնին վրայ էր երբ կը ստանար Մայրազոյն Վարդապետութեան աստիճան:

1971ին կու գայ Դամասկոս իբրեւ առժմ. հովիւ տեղւոյն Հայ գաղութին: 1973ին կ'անցնի Պէյրութ, ուր կը մնայ մինչեւ 1976:

1976ի Յունուարին կը վերադառնայ Ս. Աթոռ: Սակայն արդէն խաբխած իր առողջութիւնը շատ չանցած զինք կը գամէ անկողնին:

Հանգուցեալին դազաղը Մայրավանք կը փոխադրուի 6 Սեպտեմբեր, Չորեքշաբթի կէսօրէ ետք, եւ երեկոյան ժամերգութեան աւարտին Աւետարաններու ընթերցումով եւ հանգստեան շարականներու երգեցողութեամբ կը բերուի Մայր Տաճար:

Վերջին օժման եւ յուղարկաւորութեան արարողութիւնները կը կատարուին Եշ. 7 Սեպտեմբերի առաւօտուն, Մայր Տաճարին մէջ: Սուրբ Պատարագը կը մատուցանէ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան: «Ողջոյն»ի ատեն դազաղը բնմ կը հանուի, ուր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դարեկեան կը կատարէ վերջին օծումը եւ կը խօսի դամբանականը, վեր հանելով Հանգուցեալին ցուցաբերած ծառայութեան ոգին: Կը թաղուի Ս. Փրկչի գերեզմանատան մէջ:

«Սիոն», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան, երկնային խաղաղութիւն կը հայցէ հանգուցեալի բարի հոգիին: Յաւիտենական հանգիստ իր յոգնաբեկ ոսկորներուն: